

ԲՆԱԿԱՅՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Բնական միջավայրի պահպանության ասպարեզում տվյալ երկրի քաղաքականությունը կախված է նրա սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, սակայն բնապահպանական քաղաքականությունը բոլոր դեպքերում պետք է լուծի մի քանի համալիր խնդիրներ, որոնք ընդհանուր են բոլոր երկրների համար, անկախ նրանց քաղաքական համակարգից: Այդ խնդիրները կապված են բնական միջավայրի (ջրերի, մթնոլորտի, հողերի և այլն) աղտոտվածության հետ: Ստացվող տվյալների մշակումը հնարավորություն է տալիս բնօգտագործման և արտադրության ժամանակ գնահատել տեղամասի, տարածաշրջանի աղտոտվածության տեսակը և աստիճանը ու որոշել այն հիմնական ցուցանիշները, որոնք հնարավորություն կտան պահպանելու միջավայրն իր բնական վիճակում, մշակել բնության պահպանման համալիր ծրագրեր, վերականգնել և բարելավել շրջակա միջավայրը:

Բնապահպանական ծրագրեր կազմվում են այնպես, ինչպես արտադրության զարգացման և սպառման ոլորտի ծրագրերը: Դրանց մշակումը պետք է ելնի կանխատեսվող հիմնավորված ծախսերից, որոնք պետք է շաղկապված լինեն տեղական, շրջանային և ազգային մակարդակով, տարեկան, բազմամյա, համալիր և հեռանկարային բյուջեների հետ: Որքան բարձր է ազգային եկամուտը, այնքան մեծ է այն գումարը, որը կարելի է առանձնացնել բնապահպանիչ միջոցառումների համար:

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական քաղաքականության առանձնահատկությունների բացահայտմանը, բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից հանրապետությունում մշակվել և իրականացվել են բազմաթիվ բնապահպանական ծրագրեր, ինչը, ի դեպ, կրում է շարունակական բնույթ: Մասնավորապես մշակվել է «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագիրը», որն ուղղված է բնապահպանական քաղաքականության, ոլորտը կարգավորող օրենսդրության, շրջակա միջավայրի պաշտպանության, մթնոլորտի, ջրային ու հողային ռեսուրսների, կենսառեսուրսների, այդ թվում՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, կենցաղային և արդյունաբերական թափոնների կառավարման բնագավառներում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Բնապահպանական հիմնախնդիրներին լուրջ տեղ է հատկացված նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: Դրանց ազդեցությունը խիստ որոշակի է, ընդ որում գյուղական և քաղաքային բնակչության աղքատության վրա ազդեցության տեսանկյունից բնապահպանական խնդիրները տարբեր կերպ են դրսևորվում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղական բնակչությունը խիստ կախվածության մեջ է գտնվում բնական ռեսուրսներից: Մասնավորապես, հողերի և անտառների դեգրադացիայի խնդիրն ուղղակի ազդեցություն է գործում գյուղական բնակչության եկամուտների մակարդակի վրա: Ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանը, ապա վերջինիս կենսապայմանների վրա միջնորդավորված ազդում է մթնոլորտի աղտոտվածությունը, ինչպես նաև քաղաքականության առաջնահերթություններից մեկն է շրջակա միջավայրի բարելավման համալիր միջոցառումների իրականացումը:

նացումը և այդ համատեքստում նաև հողային, ջրային և բնական այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակումը:

Պետք է նշել, որ չնայած առկա բացթողումներին՝ հանրապետությունում որոշակիորեն ձևավորված է շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ծագող հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական դաշտը: Միաժամանակ այն էական բարելավումների կարիք ունի, հատկապես բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

ՀՀ-ում ընդունվել են բնապահպանության ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ, որոնցից շատերը պայմանավորված էին միջազգային կոնվենցիաներից բխող երկրի ստանձնած պարտավորությունների կատարմամբ:

2000 թվականից սկսած՝ վերանայվեցին բնապահպանության ոլորտի մի շարք օրենքներ, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցմամբ:

Վերջին տարիներին արձանագրվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով բյուջետային մուտքերի շարունակական ավելացում, ինչը, ի թիվս այլ գործոնների, հնարավորություն է տվել որոշակիորեն մեծացնել բնապահպանության ոլորտի պետական ֆինանսավորման ծավալները: Մասնավորապես, վերջիններս 2006 թվականին կազմել են 3.6 մլրդ դրամ 2001 թվականի 435.6 մլն դրամի փոխարեն:

2006 թվականին բնության հատուկ պահպանվող տարածքների գծով պետական բյուջեից կատարված ծախսերը կազմել են 510.5 մլն դրամ՝ նախատեսված ծավալի 99.9%-ը, որը շուրջ 2.2 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Նշված միջոցների հաշվին իրականացվել են 14 ծրագրեր:

Հանրապետության բնապահպանության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումը ենթադրում է բնապահպանական երկարաժամկետ, համալիր պետական ծրագրերի մշակում և իրականացում, որն ուղղված կլինի մարդու կյանքի համար բնապահպանական անվտանգ պայմանների ապահովմանը, բնական գեոֆոնդի, կենդանական և բուսական աշխարհի պահպանությանը և բնականոն վերարտադրությանը:

Բնապահպանական ծրագրերի իրականացումը կապված է այն հիմնախնդիրների հետ, թե պետությունն այդ նպատակով որքան ֆինանսական միջոցներ է տնօրինում, որքան է ընդունակ մշակելու արդյունավետ և տնտեսապես շահավետ օրենքներ, նորմատիվ ակտեր էկոլոգիական քաղաքականության մեջ: Վերջինս ընդգրկում է կարգավորող և տնտեսական բազմաթիվ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս, կապված տնտեսության վերակառուցման հետ, ստանալ առավելագույն օգուտ: Այսպես, օրինակ, վերջին տասնամյակում պետությունը զգալի չափով նվազեցրեց արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը ֆինանսական օժանդակությունը, որն առաջ բերեց էներգիայի օգտագործման խնայողություն, դրա հետ կապված պակասեց մարդկանց առողջության վրա ազդող վտանգավոր նյութերի արտանետումը մթնոլորտ: Աստիճանաբար, էներգիայի խնայողաբար օգտագործման նպատակով, անհրաժեշտություն է առաջանում ներդնել առաջավոր տեխնոլոգիաներ: Առաջնային են ներդրումների շահավետությունը և ռիսկի գնահատումը, դրանով իսկ երկրի էկոլոգիական իրավիճակի ապահովումը և անվտանգությունը: Այդ միջոցառումների իրականացումը կապված է ոչ այնքան կոնկրետ էկոլոգիական խնդիրների առանձնահատկությունների կամ նրանց լուծման հնարավորությունների որոնման, որքան ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար առկայության և կազմակերպչական ներուժի բացակայության հետ:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավելու երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստելու

նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը: Շուկայական հարաբերությունները ներառում են օրենքների, ֆինանսական ներդրումների, հարկերի, տուգանքների և պատիժների մի այնպիսի համակարգ, որը կբացառեր կամ նվազագույնի կհասցներ բնական ռեսուրսների շռայլումը և գիշատիչ շահագործումը՝ դրանով իսկ պահպանելով բնական միջավայրը մարդածին և տեխնածին աղտոտվածությունից և մարդկանց համար ստեղծելով առողջ կենսապայմաններ: Այդ հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտ է ոչ միայն ներկա, այլ նաև գալիք սերունդների համար, որոնց սպառնում է էկոլոգիական ճգնաժամը:

Բնօգտագործման էկոնոմիկայի հարցերը դարձել են տնտեսագիտության ենթադյուղերի հատուկ ուսումնասիրության օբյեկտ, որոնք ուսումնասիրում են արտադրական հարաբերությունները մարդկանց միջև, տվյալ կոնկրետ դեպքում արտադրական հարաբերությունները, որոնք կազմավորվում են հասարակության և բնական միջավայրի զարգացման փոխազդեցության գործընթացում: Բնօգտագործման էկոնոմիկայի խնդիրների մեջ մտնում են մարդկային հասարակության կողմից իր պահանջումները բավարարելու համար բնական ռեսուրսների օգտագործման տնտեսագիտական օրինաչափությունները:

Արտադրության էկոլոգացման և բնական միջավայրի պահպանման կառավարման կարևոր լծակ է էկոլոգիական փորձաքննությունը: Նրանով պետք է քննարկման ենթարկվեն տնտեսական և այլ բնույթի գործունեության բոլոր ներդրումային նախագծերը և ծրագրերը: Պետական էկոլոգիական փորձաքննության խնդիրներն են.

- տնտեսական կամ այլ գործունեության նախանշման և իրականացման ժամանակ էկոլոգիական վտանգի մակարդակի որոշումը, որը կարող է ներկայումս և ապագայում ուղղակիորեն և անուղղակի ներգործություն թողնել շրջապատող միջավայրի և բնակչության առողջության վրա,
- տնտեսական կամ այլ գործունեության նախագծերի ստուգում՝ արդյոք այն համապատասխանում է օրենսդրական պահանջներին,
- նախագծերի հիմնավորվածությունը և լրիվության որոշումը նախատեսված բնության պահպանության չափերին:

Պետական էկոլոգիական փորձաքննություն անցկացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ ելնելով օրինականության, համալիրության, հրապարակայնության սկզբունքներից, հասարակության ակտիվ մասնակցությամբ: Փորձաքննությանը չպետք է մասնակցեն անձինք, որոնք այս կամ այն կերպ շահագրգռված են նրա ելքով:

Նախագծերի լիարժեք էկոլոգիական փորձաքննությունը նկատի ունի նաև տարածքի տնտեսական և քաղաքաշինական յուրացվածության և հնարավորությունների աստիճանի պարզաբանումը: Դրանք բոլորն էլ ուժեղացնում են նախագծի նկատմամբ էկոլոգիական պահանջները: Էկոլոգիական փորձաքննության հիմնավորումը հանգեցնում է նախագծերի իրացման պայմաններում տարածքի էկոլոգիական, ռեսուրսային ու տնտեսական ժամանակակից և հեռանկարային կարողությունների որոշմանն ու գնահատմանը:

Տարածքի էկոլոգիական գնահատականը նշանակալից չափերով պայմանավորված է նաև բնական հարստությունների և նախագծվող արդյունաբերական օբյեկտի տիպով: Օրինակ՝ էկոլոգիական վտանգը ավելանում է գունավոր մետաղների և քիմիական արդյունաբերության օբյեկտների ստեղծման ժամանակ, առավելապես դրանց համատեղության դեպքում: Այս ճյուղերի թափոնները վնասակար են մարդու և շրջակա միջավայրի համար, առաջացնում են զանազան հիվանդություններ և անուղղելի փոփոխություններ միջավայրում: Ուստի նման ձեռնարկություններում պետք է գործի անթափոն տեխնոլոգիա, և դրանք լինեն մեկուսացված բնակավայրերից ու առողջաբանային նպատակներով օգտագործվող տարածքներից:

Նկատենք, որ լեռնային երկրներում էկոլոգիական փորձաքննության կիրառումը համեմատաբար դժվար է, քան հարթավայրերում: Այստեղ շրջակա միջավայրն ունի լանդշաֆտների

բազմազանություն, բնական երևույթների ու պրոցեսների սեզոնային և օրական ռիթմերի մեծ տատանումներ ու հերթափոխ: Բացի այդ, լեռնային շրջաններում տարածքի տարբեր մասերը, գտնվելով տարբեր բարձունքային լանդշաֆտային հարկերում, տարբեր չափերով են նպաստավոր մարդու կյանքի ու աշխատանքային գործունեության համար: Տեսականորեն փորձաքննությունը նախատեսում է տարածքային, բնական, սոցիալական, տնտեսական համակարգերի համալիր գնահատում:

Բնության պահպանության միջոցառումների մակարդակի վրա ծախսումների մոդելը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալ-տնտեսական և բնական հետևյալ հիմնական ցուցանիշները.

- էկոլոգատնտեսական հիմնական ֆոնդերի նվազագույն հիմնավորված մակարդակը,
- բուսաբուծության, անասնապահության, անասնաբուծության արտադրանքի վերարտադրության և աճի տեմպերի պահպանման ծախսերի պակասեցում,
- աշխատանքի արտադրողականության բարձրացում աշխատավորների առողջության ամրապնդման հաշվին, պրոֆեսիոնալ հիվանդությունների պատճառով անաշխատունակ օրերի նվազեցում,
- արտադրության մնացուկների հաշվին երկրորդական արտադրանքի շահութաբերության ցուցանիշի բարձրացում,
- բնօգտագործման ոլորտում գների համակարգի զարգացում,
- տարածաշրջանում ձեռնարկությունների բնապահպանիչ միջոցառումների ֆոնդազինվածության և էներգազինվածության, բնապահպանիչ միջոցառումների կոոպերացման կազմակերպման մակարդակի բարձրացում,
- արտադրական թափոնների մաքրման ծախսը,
- մաքրած ջրի ինքնարժեքը ջրամատակարարման շրջապատույտում,
- տարածաշրջանի անտառային զանգվածներում թթվածնի վերարտադրման տեսակարար ցուցանիշը,
- տվյալ շրջանում բնական միջավայրի վիճակի վրա ուրիշ տարածաշրջանների ազդեցության աստիճանը և այլն:

Թվարկված ցուցանիշների հաշվառումը հնարավորություն է տալիս ստեղծել էկոլոգատեկոնոմիկական (էկոլոգատնտեսագիտական) համակարգի մոդել բնօգտագործման էկոնոմիկայի գծային փոխադարձ կապերի տեսքով, որը հնարավորություն է տալիս բացահայտելու էկոլոգատեկոնոմիկական համակարգի փոփոխությունները՝ պայմանավորված մարդածին կամ բնական ներգործությամբ, որոշելու ծրագրային ցուցանիշների կայունությունը հեռանկարում:

Ներկայումս աշխարհի մի շարք արդյունաբերական զարգացած երկրներում շրջապատող բնական միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը ծայրահեղ անբավարար է, ագրեսիվ խառնուրդների համակենտրոնացումը նշանակալից չափով ավելանում է և տնտեսությանը հասցնում հսկայական վնասներ: Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակը մեծ սպառնալիք է արդյունաբերական շրջանների բնակչությանը, դաշտավայրային, անտառային ծածկին: Մթնոլորտի, ջրերի, հողերի թունավորումն առաջ է բերում մի շարք հիվանդություններ:

Օդն աղտոտվում է հիմնականում ծխի գազերով, որի մեջ պարունակվում են ծծմբի օքսիդ, ազոտ և ածխածին, ինչպես նաև տարբեր ածխաջրածնային և կոնցերտոգեն նյութեր, որոնք կործանիչ ազդեցություն են թողնում կենդանի օրգանիզմների և բուսական աշխարհի վրա: Բնությունն աղտոտող նյութերի քանակությունն անընդհատ ավելանում է, իսկ բնական միջավայրի ընդունակությունները, պայքարելու, ինքնամաքրվելու մարդածին վնասակար ազդեցություններն ունեն որոշակի սահմաններ: Աղտոտվածությունը բնության վրա բացի ուղղակի վնասակար ազդեցությունից, ներգործում է նաև անուղղակի ձևով, նա՝ ոչնչացնում և թունա-

վորում է գյուղատնտեսական կուլտուրաները և անասուններին, հետևաբար դրանցից ստացվող մթերքները դառնում են օգտագործման համար ոչ պիտանի:

Կտրուկ ավելանում է օրգանական և ոչ օրգանական վառելանյութերի քանակությունը, որը գիտության և տեխնիկայի վրա դնում է արտակարգ սուր խնդիրներ, որոնց լուծումից է կախված տվյալ երկրի տնտեսության զարգացման տեմպերի աճը: Այդ հիմնախնդիրներն են: Վառելիքի խնայողաբար և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրը, բնական միջավայրի պահպանումը ագրեսիվ խառնուրդներից, որոնք առաջանում են վառելանյութի այրման ժամանակ և արդյունաբերության տեխնոլոգիական գործընթացում: Մյուս փոխկապված են և կարող են հաջողությամբ լուծվել ակադեմիական, բուհական և գերատեսչական գիտահետազոտական հիմնարկությունների համատեղ գործունեության շնորհիվ: Նեղ գերատեսչական մոտեցումը բնապահպանիչ միջոցառումների մշակման գործում պետք է բացառվի: Մեծ նշանակություն ունի բնության հարստությունների նկատմամբ խնայողական վերաբերմունքը և նրանց առավել արդյունավետ օգտագործման ուղիների ընտրությունը:

Բնապահպանական և բնօգտագործման գործունեությունը բավականին ծախսատար է, այն պահանջում է ֆինանսական աղբյուրների կայունության պետական և հասարակական հսկողություն:

Շրջակա միջավայրի խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովվում է ՀՀ պետբյուջեից, ինչպես նաև հատուկ նպատակային ֆոնդերից:

Մոտ ապագայում պետք է վերականգնվի էկոլոգիական վճարների դերը, որպես ձեռնարկությունների կողմից շրջակա միջավայրի աղտոտման նվազեցման խթան:

Պետք է քննարկվի նաև ձեռնարկությունների համար վճարների սանդղակի ներդրումը՝ կախված արտանետումների կառուցվածքից, չափից, հասցված էկոլոգիական վնասից:

Էկոլոգիական տնտեսական քաղաքականության իրականացումը անբակտելիորեն կապված է ընդհանուր ինվեստիցիոն գործունեությանը:

Անհրաժեշտ է կատարելագործել գործող բնապահպանական և բնօգտագործման նախագծերը ֆինանսավորման նոր սխեմաների իրականացման ճանապարհով: Նման համակարգի կարևոր տարր են միջբյուջետային հարաբերությունները և էկոլոգիական նախագծերի ֆինանսավորման կանոնները, որոնք նախատեսում են հանրապետական և տեղական բյուջեների բաժնեմասնակցություն:

Տեղական բյուջեներում ֆինանսավորման մակարդակով առաջնային պետք է լինեն առավել աղտոտված արտադրական ոլորտների կառուցվածքային փոփոխություններին ուղղված նախագծերը, ինչպես նաև շրջանների էկոլոգիական խնդիրների լուծումը: Այսօր աղտոտումն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը լուրջ հիմնախնդիրներ են, որոնք հնարավոր չէ լուծել Հայաստանի սահմանափակ ֆինանսական միջոցներով:

Այդ վնասներից արագորեն ազատվելու համար անհրաժեշտ է ստեղծել շրջակա միջավայրի և աղտոտման պատասխանատվությամբ էկոլոգիական ապահովագրական ծառայություններ՝ որպես շրջակա միջավայրի աղտոտվածության և կանխարգելման համար դրամական միջոցների ձևավորման մեխանիզմ:

Նշված խնդիրների լուծման համար առաջնային է հետևյալ հիմնական կազմակերպչական միջոցառումների կենսագործումը.

- պետական փորձաքննության և հսկողության գործունեության արդյունավետության բարձրացում,
- անհրաժեշտ նորմատիվային իրավական բազայի ձևավորում, ֆինանսական մեխանիզմների ներդրում, որոնք կխթանեն շրջակա միջավայրի պահպանման ոլորտի ներդրումային գործունեությունը,

- ըստ մարզերի շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի ձևավորում՝ կապված շրջանների սոցիալ-տնտեսական ծրագրերի զարգացման հետ,
- իրականացնել հարկային դաշտի ձևավորում, որը կխթանի բնապահպանական գործընթացները խթանելով աշխատատար արտադրությունները և այն գործունեությունը, որն իրականացվում է՝ օգտագործելով մարդկային ռեսուրսները:

Երկրի էկոլոգիական սոցիալական քաղաքականությունը պետք է նպաստի էկոլոգիական ծրագրերում արտասահմանյան ներդրումների ներգրավմանը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ բնապահպանական միջոցառումների արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է բնապահպանական ծախսերի ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացումը տնտեսական մեխանիզմների և ծախսերի բաշխման գիտականորեն հիմնավորված չափանիշների ներդրմամբ: Նման մոտեցումը բնապահպանական ծախսերի և բնապահպանական միջոցառումների համատեղելիության և գործողությունների հստակեցման երաշխիքի նախադրյալներ է ստեղծում: Հետևաբար, ժամանակակից տնտեսագիտությունը և բնօգտագործման կազմակերպումը պետք է հաշվի առնեն նշված հասկացությունները և սահմանեն ռացիոնալ հարաբերակցությունը սպառման, արտադրության զարգացման մակարդակների ու էկոլոգիական գործոնների միջև:

ԱՆՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԶԵՌԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքը կապված է կառավարչական գործունեության սկզբունքորեն նոր մոտեցումների հետ: Վարչահրամայական պլանավորման վրա հիմնված սոցիալիստական կառավարման սխեման ուղղված էր արտադրության աճի մեխանիզմի կատարելագործմանը և մշակմանը, նրա սերիականության և համատարածության ապահովմանը: Տնտեսվարման պայմանների բարդացումը՝ պայմանավորված արտադրության անկմամբ և շուկայական հարաբերություններին անցմամբ, ներֆիրմային կառավարման համար նշանակում էին հեռանկարի կորուստ, պլանավորման ծավալների զգալի կրճատում: Կառավարչական որոշումների արդյունքների անկանխատեսելիության և անորոշության պայմաններում նախկին կայուն երկարաժամկետ կողմնորոշիչներին փոխարինեց կառավարման «դեպքից դեպք» մեթոդը, երբ ձեռնարկության կառավարչական որոշումների հիմքում դրվում են ընթացիկ օպերատիվ նպատակները և միջոցները՝ ուղղված առաջացող խնդիրների շուտափույթ լուծմանը և տարբեր իրավիճակների բացասական հետևանքների վերացմանը: Այս պայմաններում ձեռնարկությունների համար բնորոշ է նրանց կառավարելիության ընդհանուր անկումը:

Ժամանակակից շուկայական հարաբերությունները և տեխնոլոգիական առաջընթացը առավել խիստ են դնում ձեռնարկատիրության և ինովացիաների վրա հիմնված մեթոդների մշակման հարցը: Իսկ ձեռնարկատիրական կառավարման անցման անհրաժեշտությունը պայմանավորված է, նախ և առաջ, ժամանակակից արտադրական համակարգերի գործունեության ստանդարտների փոփոխություններով: